

Ա. ԳԻՒԼԻԱՆԴԱՆԵԱՆ, «Հայ - Թաքարական Ընդհարումները»

Հատոր Ա. Բագուի առաջին լնդհարումները, Փարփ, 1933:

Այս գրքի մասին մեր մամուլը արտադրայուեց շերժ համակրանքով՝ ընդուզելով յատկապէս նրա զաստիարակչական արժէքը նոր սերնդի համար։ Ամբողջապէս միանալով այդ արտադրայութիւններին՝ մենք անհրաժեշտ ենք համարում Եր. Գիւլիանդանեանի աշխատավորթեան մօտենալ նաև իրրեւ պատմուկան աշխատավորթեան։ Այս տեսակէտից ի՞նչ է ներկայացնում այդ աշխատավորթինք։

Սխալւած չենք լինի, եթէ Ա. Գիւր-  
խանղանեանի գործը դասենք պատմա-  
կան յուշագրութեան շարքը: Իբրև դէպ-  
քերի անմիջական մասնակից, նոյն իսկ  
զեկավար գեր կատարող՝ Հեղինակը խօ-  
սում է ոչ որպէս առարկայական պատ-  
մաբան, այլ ականատեսի ու գերակատա-  
րի հանգամանքով, յաճախ, կիրառելով  
նաեւ տառչին դէմքով պատմողի ձեւը:  
Եւ, մեր կարծիքով, զրքի ամենազնա-  
հատկելի մասը հէնց այս է. այսակը հե-  
ղինակը տալիս է նոր գծեր ու լուսա-  
բանութիւններ, մինչդեռ պատմութեան  
միւս մասերը ընդհանրապէս առնւած  
են արդէն հրատարակւած աղբիւրներից  
և առանձին նորութիւն չեն պարունա-  
կում:

Ա. Գիւլիսանդանեանի գիրքը բովանդակուում է Բագուի 4 օրւայ ընդհարուումների նկարագրութիւնը (1905 թ. վետր. 6-9): Ապա արւում են տեղեկութիւններ փետրւարեան թէպքերի ժամանակ աչքի ընկած մարտիկների, գործիչների եւ կուսակցութիւնների մասին: Վեր են հանուում ընդհարումներից անմիջապէս յետոյ պատահած անցուզարձերը՝ քաղաքացիների կատարած աշխատանքները, նպաստի գործը, խաղաղարար յանձնաժողովները, ականատեսների վկայութիւնները եւ, գերջապէս, ուսւ կապահարութեան խաղացած գերը:

Բաղուրի երկրորդ գէսփերին պէտք է  
նուիրի գրքի երկրորդ հատորը, իսկ  
երկու ուրիշ հատորի մէջ էլ ենթագըր-  
ումը է ամփոփել Անդրկովկասի միւս  
չըջաններում պատահած լնդհարումնե-  
րը:

իր յուշագրսւթիւնը Ա. Գիւլման-  
զեան համակել է նաև զանազան նիւթե-  
րի մէջքիբումներով, որով զիրքը սոսա-  
ցել է կէսունում, կչօմշակւած նիւթերի  
հաւաքածոյի կերպարանք։ Եւ որովհե-  
տեւ հեղինակը իր գրւածքի մէջ դրել է,  
նիւթից զատ, եւ սիրտ ու Հոգի - գուրու-  
է եկել Ընթերցանութեան համար գըրա-  
ւիչ աշխատութիւն։

Պատմաբանի տեսակէտից Գիւլխան-  
դոնինեանի աշխատութեան ամենահետա-  
քրքրական մասը, ինչպէս ասացինք,  
նրա յուշերն են - տեսածներն ու գիտո-  
ղութիւնները։ Գալով ուսումնասիրա-  
կան բաժնին՝ պէտք է ասել, որ նա,  
մեծ մասմբ, խաղցումն է արդէն իսկ  
լոյս տեսած նիւթերի։ Հակառակ զրքի  
յառաջարանում ատածին, թէ «Հայ -  
թաթարական ընդհարումների մասին  
թէպէտ մէկ մամուլի մէջ իր ժամանա-  
կին որու տեղեկութիւններ լոյս են տե-  
սել, բայց մինչեւ այժմ փորձ չի եղել  
ի մի հաւաքելու ոչ միայն մամուլի  
մէջ երեւ յածները, այլ եւ ականատես-  
ների վկայութիւնները», պէտք է յայտ-  
նենք, որ այդ ուղղութեամբ բաւական  
դորձ կատարած է։ Եթէնք, թէկուզ,  
Ա-Դօփ ահսորը Հայ-թրքական ընդհա-  
րումների մասին, Մ. Ցովհաննիսեանի  
(Վարանգեան), «Կովկասեան Վանդէ-  
տուն», Գ. Անանունի «Ուսուահայերի հա-  
ստրակական զարգացումը», Յ-րդ Հա-  
տոր (որից օգտակա է եւ ինքը Ա. Գիւլ-  
խանգանեանը), Արամայիսի զիրքը «Յա-  
սուչ» մատենաշարում, Մ. Վարանդեա-  
նի «Հ. Գ. Պատմութիւն»-ը եւալին,

այլեւ Վ. Մայեսկու և Ս. Զաւարիա-նի ռուսերէն գրքերը: Ճիշտ է, Ա. Գիւլ-խանդանեանի ծրագրած լայն սահման-ներով աշխատանք չէ կատարւած բայց տրւածը, յամենայն դէպս, անտես առ-նըւելիք բան չէ:

Գալով ներկայ զրախօսականի առար-կայ եղաղ հասորին, կուզէինք անել մի քանի գիտողութիւններ՝ յատկապէս յաջորդ հասորները կազմելիս ի նկատի ունենալու համար: Ամենից առաջ աչքի է զարնում աշխատութեան փաստական-ժամանակաղայքին մասի թուլութիւնը, մանաւանդ գործինների և մարտիկների կենսագրութիւնների մէջ: Սրանց մաս-սին հեղինակը տալիս է շատ կարծ տե-ղեկութիւններ՝ և աւելի՝ անձնական խորհրդածութիւններ: Պատմական տե-սակէտից կարեւոր փաստն է: խորհր-դածութիւնը պէտք է բիթ փաստից:

Չեն լուսաբանւած ինքնապաշտպա-նութեան կազմակերպութեան ձեւը, զե-կավար մարմնի կազմն ու գործու-նէութիւնը, ներկութամանի գերը, նա-և զերը հասորական խուրիք: Նոյ-նը՝ և հակառակորդի մօտ:

Չեն քննւած հայ-թաթարական ընդ-հարումների ծագման պատճանները, մի բան որ թում է թէ, պէտք է ար-ուէր հէնց տառջին հասորում: Չեն ու-տագործած սենատոր կուզմինսկու կա-տագործած սենատոր փոխար-դած քննութեան նիւթերը, փոխար-դայ Վորոնցով-Դաշկովի ցարին ուղ-դարկած տեղեկագրերը եւայլն:

Չեն հիմնուորւած և 4 օրեայ կոիւ-ների հասցրած մարդկային և նիւթա-կան դոհերի թիւը: Ա. Գիւլխանդանեա-նը իր բերած տեղեկութիւնները քաղել է Գ. Անանունի զրքից (էջ 168-169): Անանունը տալիս է սեն. կուզմինսկու Բ. Գոլուխանեանի հազարդած թիւե-նը: Բայտ առաջնի սպանած է 234 հայ ըլ: Հաս առաջնի սպանած է 104 հայ, և 41 թուրք: Վիրաւորւած է 104 հայ, 87 թուրք: Բայտ երկրորդի սպանած է 205 հայ և 111 թուրք: Վիրաւորւած է 121 հայ և 128 թուրք: Գիւլխանդան-

եանը առել է Դոլուխանեանի թիւերը: ինչո՞ւ ոչ կուզմինսկու մնում է մութ:

Նոյնը պէսք է ասել և նիւթական կորուսաների մասին. Դ. Անանունը, յեն-ւելով «Մշակօ-ի հրատարակած տեկա-ների վրա, ընդհանուր վիասը ցոյց է տալիս Յ միլիոն բուրգի. Գիւլխանդան-եանը կը կում է այդ թիւը. «ամբողջ վիասը հաշւում էր մօտ Յ միլիոն ոսկի բուրգի, որի մեծագոյն մասը հայկա-կան էր»: Դ. Անանունը իր թիւը առաջ է բերում որոշ վերապահութեամբ եւ ցոյց տալով աղբիւրները. Գիւլխան-դանեանը ներկայացնում է որպէս հաս-տատած փաստ և աղբիւրները ցոյց տալու փոխարէն՝ յայտնում է՝ «ինչ-ոքս ցոյց տես վիճակագրութիւնը» (էջ 55). Այս վիճակագրութիւնը մնում է անյայտ:

Այս ընդհանուր գիտողութիւններից յետոյ՝ նաեւ երկու մասնակի ճշտում-ներ: Չորրորդ գլուխը սկսում է այս-պիսի խօսքով. «Հաշտութիւնից անմի-ջաղէս յետոյ, Բայու քաղաքում սկըս-ւեցին աննախընթաց ժողովներ (էջ 117): Եւ նկարագրում են այդ ժողովները: Ստացում է ապաւորութիւն, որ այդ ժողովները արդիւնք էին հայ-թաթա-րական ընդհարումների, այն ինչ նը-րանք բխում էին ցարիզմի ճագանական ճակառում կրած շշմեցնող հարւածնե-րից. ուսւ-ճապանական պատերազմը վերջանում էր պարտութեամբ, եւ Ռու-սաստանի ժողովուրանների լեզուն սկը-սում էր բացւել: Ակսում էր յեղափո-խութիւնը:

Սամսոն Յարութիւնեանի մասին խօ-սիլիս (էջ 169), Գիւլխանդանեանը գը-րում է. «1913-14 թ. նա նորից փորձեց մօտենալ Դաշնակցութեան, բայց ոչ մի արդիւնք չունեցաւ, որովհետեւ Գաշ-նակութեան արդէն յայտնի էր նրա զոյնը: Այս վերջին փորձից յետոյ նա ընդիշում մնաց Դաշնակցութեան երդ-ւեալ հակառակորդների շարքում»: Ար-գարութիւնը պահանջում է ասել, որ

Ս. Յարութիւնեանը թէ 1913-14 թւականներին եւ թէ նրանից յետոյ, մինչեւ 1917 թ. փետրւարեան յեղափոխութիւնը, մօտ էր Դաշնակցութեան եւ դործում էր Համերաշխ դաշնակցականների հետ Ազգ. Բիւրոյում եւ Բարեգործական Ընկերութեան մէջ: 1917 թ. մարտին էր, որ նա փորձեց մտնել Դաշնակցութեան շարքերը, բայց մերժելով՝ գնաց կազմեց Հայ Ժողովրդական կուսակցութիւնը:

Մանր դիտողութիւնների այս չափը կարելի է շարունակել, բայց այսքանն էլ բաւական է մեր Հիմնական մտքի համար՝ յաջորդ հատորները կազմելիս ջանալ խուսափիլ նման թերութիւններից: Եթէ մենք այսքան երկար կանգ տոինք Ա. Գիւլֆանդաննեանի գրքի վրա, պատճառն այն է, որ համարում ենք ձեռնարկը չափակար եւ կը կամենայինք որ լինէր անթերի

Ս. Վ.

### ԳՐ. Յ. ԱՂԱԲԱԲԵՍԻՆ, «Հայաստանի Լեռսիտները»

Երկրաբանական եւ արդիւնաբերական

ուսումնակիրուրին, Թիերան, 1932:

Այս գրքոյկը վրիպեց Հայ մամուլի տեսողութիւնից, մինչդեռ թէ իր Հեղինակը եւ թէ ջաշափած հարցը արժանի են ուշաղութեան: Հեղինակը՝ պ. Գ. Աղաբաբեան, հին Հասարակական գործիք է, իբրեւ Հանքերի քաղաքացիական հարտարագիտ, հմուտ մասնագիտ եւ Հայաստանի բնական հարստութիւնների լաւատեղեակ անձերից մէկը: Նրա յօդածները կովկասահայ մամուլում միշտ էլ յագեցած էին բաղմակողմանի տպեալներով եւ ընթերցողին տալիս էին Հիմնական տեղեկութիւններ: Ցէշնք, թէկուզ, Հայաստանի անկախութեան օրերին Արարատեան դաշտի բնական հարստութիւններին նւիրւած նրա երկարաշունչ ուսումնասիրութիւնները:

Գրախօսութեան առարկայ կազմով ներկայ գրքոյկը նոյնպէս նւիրւած է Հայաստանի բնական հարստութիւններին. նա քննում է, զուտ մասնագիտական տեսակետից, Հայաստանի լեռսիտի օգտագործման խնդիրը: Լեռսիտը (leucite) տնտեսական բարձր արժէք ներկայացնող պրոտա եւ ալիւմին պարունակող մի հանք է, որ, իբրև արդիւնաբերական նիւթ, վերջերս սկսւել է օգտագործւել ճարտարաբեստական եղանակով:

Լեռսիտի մինչեւ այժմ յայտնի գլխաւոր հանքավայրը Խտալիայում է: Նըրանից յետոյ, պ. Աղաբաբեանը դում է Հայաստանը իրենց լեռսիտով հարստացնելու երկիր: Հայկական լեռսիտի կենտրոնը Զանգեզուրն է: Պ. Աղաբաբեանը դեռ 1902 թ., հանքարանական մի աշխատանքի միջոցին յայտնագործել է այդ հանքի Հսկայական պաշտուածորին Դափնիսի պղնձահանքերի շրջանում, Կավարտ, Ղաթար, Բարաբուում, Խալաջ, Նորաշէնիկ գերգերի հողերում, մօտաւորապէս 5 քառ. կիլոմետր տարածութեան վրա:

Տալով Ստորին Դափնիսի երկրաբանական պատկերը, պ. Աղաբաբեան, մօտաւոր թիւերով՝ 1,225,000,000 թոն պողոս եւ 269,500,000 թոն ալիւմին: Դըրանից միայն պոտասի արժէքը, 1932թ. զներով, կը Հաւասարւ 2,450,000,000 անգիւսական ոսկու:

Աստղաբանական այս վիթխարի թըւերը, բնականաբար, բերում են ոչ թէ որպէս վերջնականապէս հաստատած փաստ, այլ որպէս որոշ տեսալեռների վրա Հիմնաւծ ենթալրութիւն: Գրքոյկի հեղինակը ուզում է միայն հրա-